



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

« 04 » ՀՀ օրոգի 2013թ.

թիվ 268-Ձ

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ  
ԱՊՐԻԼԻ 27-Ի N 297-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշումը և ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2010 թվականի ապրիլի 27-ի <<Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթի և ատեստավորման անցկացման ընթացակարգերը հաստատելու մասին>> N 297-Ն հրամանով հաստատված N1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 23.1 և 23.2 կետերով.

<<23.1 Եթե Մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ քաղաքացի, ապա Մրցույթը համարվում է չկայացած, հայտարարվում է նոր մրցույթ՝ ընդհանուր հիմունքներով:

23.2 Եթե Մրցույթը սույն հավելվածի 23.1-րդ կետով համարվում է չկայացած, ապա քաղաքացին դրա մասին տեղեկացվում է փաստաթղթերի հանձնման վերջնաժամկետի հաջորդ աշխատանքային օրը>>:

2. 26-րդ կետից հանել՝ <<Մրցույթն անցկացվում է սակ, եթե Մրցույթին դիմել և մասնակցում է մեկ քաղաքացի>> բառերը:



Վ.ԳԱԲՐԻԵԼՅԱՆ